





ԳՐԱԿԱՆ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — ՊԱՏՄԱԿԱՆ

ԿՐԺԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ



ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱՂԱԹՈՆ

ԵԱԳՈՒՄՆ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՂԱԹՈՆԵԱՆ գերդաստանի ազգաբանութիւնն՝ մինչ ժեռ դարու վերջերն կրբ. ցինք ելնել : Մեզ ծանօթ նախահայրն Գաբրիէլ փաշազեան անուն հիւսն մ'է, Քալուի գիւղերէն զաղթած ի Կ. Պոլիս, 1670ի ժամանակներն : Գաբրիէլ կը յառաջագիմէ ի Կ. Պոլիս, կ'ըլլայ ճարտարապետ, և մինչեւ իսկ յաջդի անուանիլ կայսերական ճարտա-

րապետ (հաւանականաբար Սուլթան Սիւլէյման Բէ), և Սուլթանին սիրելին կ'ըլլայ : Իբր քրիստոնեայ՝ իւր փայլուն ղիբքն շատ մը նախանձորդներ կը ստեղծէ, որք ահիւ Սուլթանին յարգէին զնա. սակայն յետ մահու վեհապետին՝ իրենց ներքին հակակրու թիւնն երեւան կը հանեն, և սկսին հակառակել նմա :

Գաբրիէլ խալիֆան նախատեսելով այս հակակրութեանց ցաւալի հետեւանքներն, իւր Պարոն անուն որդւոյն և ընտանեաց հետ ժեռ դարու վերջերն կը զաղթէ Եպարդայի գիւղերէ մին, ուր մեծաառաքած հողեր գնելով՝ երկրագործութեամբ կը պարտապի : Գաբրիէլ արդէն ծերունի էր և քիչ ժամանակէն կը մեռնի : Պարոն նորանոր հողեր գնելով՝ իւր ազարակն օր քան զօր կը մեծցնէ և կը ծաղկեցնէ :

Պարոն կ'ունենայ երեք մանչ և երկու աղջիկ զաւակ։ Աղջիկներն՝ Գայեանէ և Սողոմէ՝ տեղացի հարուստներու հարս կու տայ, մանչերն Սարգիս, Յովհաննէս և Գաբրիէլ՝ որք Գալթայեան կը կոչուէին, իրենց պապուն արհեստին անուամբ, յետ իրենց հօր Պարոնի մահուան՝ կը զաղթեն ի Գարթալ, ուր իրենց հօր և հաւուն սիրելի երկրագործական արհեստն կը շարունակեն ընդարձակատարած հողերու վրայ։ Գալթայեան հարազատք իրենց բարեգործութեամբ և առաքինի վարուք ա՛մենուն սիրելի և ակնածելի կ'ըլլան։

Սարգիսի մասին տեղեկութիւն չունիմք. սակայն Յովհաննէսի Նշան որդիին սերած է հանրաժանօթ Սրբաւհի մայրապետն, հիմնադիր է. Պուլոյ Խառնդիդի Աղջկանց Որբանոցին, որ 1890ին վախճանեցաւ։ Իսկ Գաբրիէլ երկու զաւակ ունէր, վարդան և Աղաթօն։ վարդանի մասին բան չգիտեմք, սակայն Աղաթօն կ'ըլլայ իւր հօր յաջորդն, կ'ընդլայնէ հորենական ապրանքն, նորանոր ագարակներ ու հողեր կը գնէ, կը լինի տեղւոյն նշանաւոր մեծատունն և Գարթալի հողերու 1/4ին կը տիրանայ։ Աղաթօնի հարստութիւնն կը զրգռէ աւազցի թուրքերուն, նա մանաւանդ եկեղեցիներու նախանձն, որք մտադրին իսկ սպաննել զնա։ Մահու վճիռն չարագործաց կողմանէ արդէն տրուած և ծրագիրն ալ զծուած էր՝ երբ Աղաթօնի պաշտպանութիւնն ու երախտիքն երկար ժամանակներ է ի վեր վայելող թուրք մը՝ տեղեկանալով խորհրդոյն, կը հազորդէ Աղաթօնի, որ գիշերայն ձի նստելով կը հասնի Իսպիլտար և այսպէս մագապուր կը պրծի մահուանէ։ Եւ եկեղեցիք իրենց զոհի ազատամե տեսնելով կը

կատաղին, կը յարձակին նորա սպարակի վրայ, կը տիրեն հողերուն և կը տանին կենդանիներն, ու կ'ուխտեն գտնել վերջապէս Աղաթօնն ու զնա սպաննել։ Աղաթօն իւր հետըն թշնամիներուն յմահօթացնելու համար կը քաշուի է. Պուլոյ շրջակայներէն Ալիպէյ գիւղն, և անդ ագարակի մը մէջ իւր մշակ կը ծառայէ։ Այս ժամանակամիջոցին սակայն՝ Աղաթօն կը թղթակցէր իւր կողակցին հետ և կը մխիթարէր զնա, համբերութիւն քառու զելով. կը պատուիրէր իւր գոյութիւնն նոյն իսկ իւր ազգակցաց չմահուցանել, և կը խոստանար զինքն եւս է. Պուլոյ բերել տալ քիչ ժամանակէն։

Ժամանակ մը այսպէս իբր սուկ մշակ ապրելէ վերջ՝ կը ներկայանայ Գազազ ամիրային և կը պատմէ եղելութիւնն։ Մեծտունն ամիրան իրաց աղետներն անմիջապէս կայսերական հրաման հանել կու տայ բերել տալ իւր բնասնիքն ի է. Պուլոյ, կառավարութեան հսկողութեան տակ։

★ ★



Գրիգոր Աղաթոն

Աղաթօն իւր կողակցին Գարթալէ բերած հարստութեան բեկորներովն կը յաջորդ գնել Բիաղդ-հանէի մօտեան Ալիպէյ գիւղի ագարակն, ապա և Ջիլիֆտարի հողերու մի մասն։ Աղաթօն օր քան զօր կ'ընդլայնէր իւր հողերու տարածութիւնն, և կը պարտապէր՝ ոչ միայն երկրագործութեամբ այլ և պարտիզպանութեամբ և մանաւանդ կանխահաւ (pro-meur) ընդդէմներն և պտուղներ հասցնելով։ Այս ագարակն մէջն է որ առաջին անգամ գետնախնձորն կը մշակուի ի թուրքիս, որոյ հունտերն իտալիայէն բերել տուած էր։

Ալիպէյի ագարակն որ քան զոր կը ծաղկի շնորհիւ Աղաթօնի ջանից, և կ'ըլլայ մի համբաւաւոր տիպար ագարակ, զոր տեսնալ կու գան շատ անգամ Պոլսոյ լըկակայից մեծ հողատերերն :

Աղաթօն կը մեռնի ի խոր ծերութեան 1849ին, 92—ամեայ հասակաւ :

Աղաթօն ունեցաւ չորս զաւակ, երկուքն մանչ՝ Գեղէն և Յովսէփ, և երկուքն աղջիկ՝ Տուսու և Մարգրիտ անուամբ : — Աղաթօն արդէն ի վաղուց ագարակի հոգն յանձնած էր իւր Գեղէն որդւոյն՝ որոյ կ'օգնէր իր կրտսեր եղբայրն Յովսէփ : Սորա ի վաղուց իրենց հօր անուամբ Աղաթօնեան կը կոչուէին :

Գեղէն խիստ բարի, ազնիւ և կրօնասէր մէկն էր, իսկ իւր եղբայրն Յովսէփ՝ ունեւնալով իւր տոհմի ազնիւ յատկութիւններն՝ նաեւ խիստ ուսումասէր, և իւր ժամանակի կ. Պոլսոյ հագուստագիտ ֆրանսագէտներէ մին էր. լաւ մշակած էր իւր մայրենի լեզուն և ժամանակին գիտութիւններն : Այնչափ սիրեց ուսումն ու կրօնն՝ որ շերտաբց իոկ գտնալ եկեղեցիէն և դրօշներն զօրս իրեն ընկեր մը, և ամուրի մնաց :

Ալիպէյ գիւղի ագարակի բարդաւաճումն արդէն յարուցած էր շատ մը նախանձորգներ, յորս և ակնասուր էր իւր զրացի Լազ—Մէհմէտ Ալի փաշա հողատերն, փեսայ Սուլթան Մահմուտին՝ որ բազմիցս այդ ագարակն գնելու առաջարկներ ընելէ վերջ, տեսնալով Գեղէնի մերժումն՝ սկսաւ հակառակել և իւր ծառաներու և կենդանեաց միջոցաւ՝ արշտոյել կու տար ցաւքերն ու հունձքներն : Գեղէն ի նկատի առնելով այս ամիսօրեայ փնասներն՝ հարկադրուեցաւ վերջապէս ծախել զայն աւանդաշէն գնով մը՝ 1850ին :

Գեղէնն ցաւ ի սիրտ թողուց իւր վաստակաւոր հօր քրտանց արդիւնք այդ ծաղկեալ տիպար ագարակն՝ և սրտաբեկ չուզեց այլ եւս ուրիշ հողերու տիրաւայու բաղձալ, և բոլորովին քաղուեցաւ գործունէութիւնէ. սակայն այս խնդիր մեծ վիշտ կը պատճառէ իրեն, չկրնար մոռնալ, կը մտալէ զիրեն և կը շտապէ իւր վախճանն, և վերջապէս երկու տարիներ ետք (1854ին)՝ ջատակ ինքու

մի օրն յեկեղեցւոյ՝ հաղորդութիւն առնելէն անմիջապէս վերջ՝ յանկարծամահ կ'ըլլայ ի հասակի 70 ամաց :

Գեղէն թողուց երեք զաւակներ Միքայէլ, Գրիգոր և Սրբայի : Միքայէլ խիստ խելացի կրակոտ և ուսումասէր էր միանգամայն. աշակերտեցաւ խառնիղի Ներսէսեան վարժարանին, մշակեց բաց ի մայրենի լեզուէն, թուրքերէն, իտալերէն և ֆրանսերէն : Նախ պետ եղաւ Ճէզայիբի Ամիրային շերամի գործին, զոր թողլով՝ կառավարական տեսանորդի տորց վարձակալութիւն կ'ընէր. ապա եղաւ դատաւոր : Իւր այս պաշտօնից մէջ մոռցած չէ իւր ազգն և միշտ եղած է ազգային նշանաւոր գործիչ. Միքայէլ կը մեռնի 1864, օգոստոս 12ին, 44 տարեկան հասակաւ : Գամբ այժմ Գրիգոր Աղաթօնին, որ այս մեծ գերդաստանի ամենահայտկապ մէկն է :

* *

Գրիգոր Աղաթօն՝ ծնեալ 1823 յուլիս 4ին ի խառնիղ, աշակերտեցաւ գիւղին Ներսէսեան վարժարանին, ուր իւր ուշիմութեամբ Ճէզայիբեան Միքտիչ ամիրային ունի հրաւիրեց իւր վրայ և զնա ունեցաւ իրեն պաշտպան : Գրիգոր լաւ ձայն ունէր, դպրութիւն ալ կ'ընէր : Սա մշակեց ոչ միայն հայերէն և թուրքերէն՝ այլ և ուսաւ իտալերէն և ֆրանսերէն լեզուներն : Այս օտար լեզուաց գործնականի մշակութեան համար՝ ստէպ կը յաճախէր կալաթիոյ Անթիքանի Լուսթֆի աղային խանութն, ուր եւրոպացիներ կը յաճախէին և ուր միշտ ֆրանսերէն կը խօսուէր : Գրիգոր հմուտ էր նաեւ թախանաթի մաթիքի և այլ գիտութեանց. դիրքին էր գուշակել թէ նա մեծ մարդ պիտի լինէր, և արդէն զայս վկայէին բոլոր իւր ծանօթներն :

Գրիգոր Աղաթօն մշակելով հանդիման զուներն, ուսմանց և գիտութեանց՝ նա մահաւանդ մաթէմատիքի մեծ սէր ունէր, իւր հօր և նախահարց արհեստին — երկրագործութեան — համար մասնաւոր համակրանք մը կը ստաժէր, երբեք առիթն չէր փախցնէր իրենց Ալիպէյի ագարակն երթալու և երկրագործաւ

կան աշխատութիւններն տեսնելու ու քնն-
նելու :

Ճէզայիլբեան ուզելով իւր պաշտպանելոյն
փափագն պատկել , 1840 թին յոցց զայն ի
փարիզ , թուրք զեսպանատան առաջին թարգ-
ման Կըմիկեան Յակոբ էֆէ յանձնելով նորա
զատարարութեան և երկրագործութիւն ու-
սանելու հսկողութիւնն : Գրիգոր Աղաթոն
Կրիկեանի երկրագործական վարժարան մտնե-
լու կը պատրաստուի և Սթիմարանեան Գէ-
ւորգ էֆէ հետ՝ որ մի և նոյն նպատակա-
ւանք գացած էր , 1843 թին վարժարան կը
մտնէ , որ ժամանակին Եւրոպիոյ երկրագոր-
ծական բարձրագոյն հաստատութիւնն էր :

Գրիգոր Աղաթոնն նշանաւոր կ'ըլլայ յա-
շակերտաւ , առ այս իւր պապացոյց կրնամք յի-
շատակել 1845 մայիս 1 թուականաւ վար-
ժարանի տեսչութեան կողմանէ իւր ծնողաց
ղրկուած վեցամսեայ քննութեանց արդիւնք
վիճակացոյցն , զոր գտանք իւր թղթերու մէջ :
Այս վիճակացոյցն ամէն ուսմանց մասին խիստ
գոհացուցիչ նիշեր կը պարունակէ , և ապա
տեսչութիւնն կը շատագովէ նորա վարքն ,
յառաջագիւրութիւնն , աշխոյժն , տիպար աշ-
խատասիրութիւնն , և այլն¹ :

Յայնժամ Կրիկեանի շրջանաւարտը իրենց
վկայականներն առնելէ առաջ՝ ազարակի մը
մատակարարութեան մասին աշխատութիւն մը
պարտէին պատրաստել , Աղաթոնի այս աշ-
խատութիւնն խիստ նշանաւոր եղած է և ար-
ժանի բրտծ է զինքը տեսչութեան և ուսուց-
չական մարմնոյն գովեստից : Այս ընտիր
գործն զեռ կը մնայ իւր արժանաւոր հարա-
զատին Եւրոանդ էֆէ քով , և որ աւելի

երկրագործութեան ամբողջ և ընտիր զասա-
գիրք մ'է՝ քան պարզ տեղեկագիր մը :

Այն ատեններն Կրիկեանի վարժարանի ա-
ռաջին շրջանաւարտներն արքային՝ հետ ըն-
թրելու պատուոյն կ'արժանանային , Գրիգոր Ա-
ղաթոնն առաջին աշակերտներէն լինելով՝ Լուի
— Ֆրիլիպէ հետ հաշելու պատիւն ունեցաւ . սե-
ղանին ներկայ էր նաեւ թուրքիոյ զեսպանն
մեծն Բէշիտ փաշայ , որոյ դիտելու տայ
Լուի — Ֆրիլիպէ Աղաթոնի յաջողակութիւնն և
զայն կ'անուանէ Թուրքիոյ երկրագործական
տպագայ մեծ գործիչն :

Աղաթոն էֆ . Կրիկեանի վարժարանը թողլէ
վերջ՝ ժամանակ մը իւր արհեստն զործնա-
կանապէս մշակելու համար՝ զանազան ազա-
րակներ կը մնայ , կ'այցելէ Ֆրանսայի , Պե-
ճիգայի և Անգղիոյ մեծ ազարակներն և շերա-
մաբուծութեան կեդրոններն . կը հետեւի նաեւ
առեւտրական , անտեսադիտական դասուց , և
զառնայ ի Կ . Պոլիս 1847 թ վերջերն :

*
* *

Կայսերական կառավարութիւնն բամպակի
մշակութեան զարկ մը տալու համար , 1845 թն՝
Այ — Ստեֆանոյի մօտակայ Այ — Մամայի ա-
պարակն բամպակի մշակութեան վարժարանի
վերածեց . յանձնելով նորա տեսչութիւնն
Տայիլիս անուն ամերիկացու մի , որ յատկա-
պէս բերուած էր 7 տարուան պայմանագրով :
Թանախող աշակերտը այցելու էին , և 300—
700 դրշ . ամսական կ'ընդունէին իւր տե-
ղափոխութեան ծախս :

Տայիլիս մեծ տարածութեան վրայ կը
ցանէ բամպակն , երկու տարիներ իրարու
վրայ չյաջողիր . կառավարութիւնն համոզուե-
լով Պոլսոյ կլիմայի անյարմարութեան , կը
վճարէ Տայիլիս եօթնամսայ վարձքն և կը
համբէ զայն :

Բէշիտ փաշայի առաջարկութեամբ Այ — Մա-
մայի հաստատութիւնն երկրագործական վար-
ժարանի վերածուելով Աղաթոն էֆէ տես-
չութեան կը յանձնուի : Աղաթոն էֆ . 1848 թին
գործին զլուին կ'անցնի . աշակերտաց թիւն
50 ի կը սահմանէ , և նոցա ամսաթողականներ
250 դրուշի կ'ընկնէ . աշակերտը գիշերու

1. Արժան կը համարուի այս վկայութիւնն
նոյնութեամբ առ ընդօրինակել :

Monsieur Aghaton suit les cours avec beaucoup d'assiduité, il en profite et fait des progrès notables, son zèle et son application soutenus sont exemplaires, nous sommes persuadés qu'il sortira de l'école instruit et capable, et sera l'un des meilleurs élèves de sa promotion, sa conduite est parfaite, nous n'avons que des louanges à lui donner sous les rapports.

օթիկ էին, և իրենց առած թռչակաւ պարտէին հոգալ իրենց պէտքերն և սնունդն : Աղաթոն էֆ. տեսուչ և միանգամայն զլիւսւոր ուսուցիչ էր, ընդունելով ռոճիկէն զատ ամսական 4000 դր. : Ուսուցիչ էին անպ իսթիմարաճեան Գէորգ էֆ. Սիրունեան կարապետ էֆ., ֆառէնձաւ անուն ֆրանսացի մը : Գործնական երկրագործութեան հրահանգիչն իտալացի մ'էր, իսկ պարտիզպանութեան մարզիչն ֆրանսացի մը :

Հաւանականաբար այս վարժարանի տեսչութեան ժամանակամիջոցին՝ Գրիգոր Աղաթոն պարտաստած է իւր երկրագործական դատողիքին ֆրանսերէն ի ճշգրտաւ, որոյ միայն ծրարիւրն ձեռքերնիս հասած է, զոր արժան կը համարիմ ընդօրինակել աստ՝ ի գոհացումս մասնագիտաց հետաքրքրութեան :

1^{er}. Partie. — Notions générales de Botanique et de Physiologie végétales.

2^e. Partie. — Météorologie agricole.

3^e. Partie. — Agrolologie.

4^e. Partie. — Des moyens d'améliorer les terrains agricoles.

5^e. Partie. — Des opérations ou pratiques agricoles, et des instruments aratoires.

6^e. Partie. — Des forces motrices en agriculture.

7^e. Partie. — Culture des plantes.

8^e. Partie. — Economie rurale.

9^e. Partie. — Technologie agricole.

10^e. Partie. — Zootechnie et économie du bétail.

11^e. Partie. — Architecture rurale.

Աղաթոն էֆ. իւր տեսչութեան ժամանակամիջոցին իւր ուշն զարձուցած էր մասնաւորապէս շերամաբուծութեան վրայ, զոր երկրի հարստութեան մի կարեւոր աղբիւրն կը համարէր : Շերամաբուծական նորանոր գրութիւններ մտայց, ի մէջ այլոց՝ խոզակներն (con)՝ ըստ եւրոպական կարեւոր մանրաբանութեան պարպելու գրութիւնն ուսայց և ընդհանրացման աշխատեցաւ, և ըստ այնմ մանրաբաններ հաստատել տուաւ շերամագործական

կեցողոններու մէջ, յորս նշանաւոր էր Պիլէ-ճիկինն :

Մէկ ու կէս տարիէն (1849ի վերջերն) Աղաթոն էֆ. Այս-Մամայի վարժարանի տեսչութեան պաշտօնն Սիմիարաճեան Գէորգ էֆին յանձնելով՝ ինքն ճէզայիլիւեանի անձնական գործերու տեսչութիւնն ստանձնեց : Ճէզայիլցի մամիրան այս ժամանակներն իրատ կարեւոր դիրք և ընդարձակ գործունէութիւն մ'ունէր. Տաճկաստանի գրեթէ բոլոր մարզերն վարձած էր, և ունէր սեղանաւորական կարեւոր տուն մը :

Ճէզայիլցի մամիրան 1852ին սնանկանալով՝ Աղաթոն էֆէնտին պարտապ կը մնայ, և ինքզինքն զրական աշխատութեանց կու տայ. կը սկսէ գրել ֆրանսայի երկրագործական թերթերուն, և է. Պալսոյ Journal de Constantinople լրագրոյն մէջ՝ երկրագործական, և երկրագործական տնտեսագիտութեան վերաբերեալ յօդուածներ : Աղաթոն էֆէ գրութիւններ մեծ համակրանք կը գտնեն նա մասնաւորապէս ի Ֆրանսա, որ Պալսոյի զգաւորութեան կայսերական ընկերաբարիսն զայն թղթակից անդամ կ'ընտրէ 1853ին : Այս ատեններն է նաեւ որ Երկրագործական տնտեսագիտութեան թիւն թոռաբոյն անուն կարեւոր աշխատանքութեան կը ձեռնարկէ, զորմէ զորմէ պիտի խօսիմք վերջն :

Աղաթոն էֆէ եռանդն ունեցողն չէր կրնար երկար ատեն միայն զրական աշխատութիւններով բաւականանալ. ուստի Տօք. Սեր-վիէն էֆէ միջոցաւ ծանօթացաւ թուրք աւագանոյն, մշակեց նոցա բարեկամութիւնն և 1856ին բնաբուծեցաւ անդամ վաճառականական բարձրագոյն խորհրդոյն :

— Գ. Աղաթոն էֆ. 1858ին Սարտենիոյ թագաւորութեան թիւրքնի ցուցահանդէսին Տաճկաստանի կողմանէ պատուիրակ կ'անուանին : Յունիս 5ին ցուցահանդէսի տեսչական ժողովն զիտ կ'անուանէ անդամ միջազգային քննիչ ժողովոյն Էմբ բաժնին (Շերամաբուծական արտագործութեանց) իւր ներկայացուցիչ թուրքիոյ կառավարութեան¹ : Այս

1. Սարտենիոյ արքային հետ Թուրքիոյ շերամաբուծական մասին տեսակցութիւն մը կ'ու-

ցուցահանդէսին մէջ կը տրուի ոսկի միտաշ մը Սուլթանին համար, տանկաստանցի շէրամարաններէն եօթն՝ միտաշներ կ'ընդունին (որոց երկուքն արծաթե և հինգն պղնձեայ էին), և չորսն պատուոյ յիստակութեան կ'արժանանան. իսկ Իբրիսիւր էֆ. կ'ընդունի Սէն Մօրիսի և Լազարի ասպետի աստիճանն և շքանշանն (սեպտ. 9) :

Աղաթոն էֆ. ցուցահանդէսի վախճանէն վերջ անդ մնաց ժամանակ մը, սեղական երկրագործութիւնն և վաճառականութիւնն ուսումնասիրելու համար. ահա քաղաքէն անցնելով՝ դարձաւ ի Է. Պոլիս :

Գրիգոր էֆ. Թիւրքիոյ ազգային ցուցահանդէսի մասին սեղեկագիր մի մատուցած է երկրագործութեան, վաճառականութեան և հասարակաց շինութեանց նախարարութեան, որոյ ֆրանսերէն օրինակն կայ իւր թուղթերուն մէջ :

Գ. Աղաթոն էֆ. Էւրոպայէ վերադարձին՝ վաճառականական հաշուակալութեան ժողովոյն անդամ կը կարգուի :

1859ի յունիս Կին Թիւրքնի երկրագործական ակադեմիոյ թղթակից անդամ կ'ընտրուի՝ իւր շերամարտական ծառայութեանց համար :

1860ին Միսթիմիոյի աստիճան կը տրուի Աղաթոն էֆէն, և ելեմսից նախարարութեան բարձրագոյն դիւանին (տիվանը մոսկաւսկար) անդամ կ'ընտրուի : Նոյն տարւոյն վերջերն թղթագրամաց բարձման համար Օսմ. կայսերական կառավարութիւնն պէտք ունենալով մի փոխառութիւն ընել՝ Անգղիոյ դիմեց. որ առաջարկեց տեսնող նախ զանազց վիճակն ու տնտրականին : Ֆրանսա և Ալի փաշաներն Աղաթոն էֆէ կը յանձնեն կանոնաւոր տոմարներու պատրաստութեամբ քանձուց վիճակն ներկայացնելու գործն :

Նենայ, զոր հաղորդած է առ իւր եղբայրն զբաժնուի 8 թուական նամակաւն :

1. Այս անգամ քաղաքի զտնտեսած ատեն Ուր. մտադրած մեծ ընկերութեան մէջ կը մտնէ, և փառելեան « La clémence d'amitié », ահուն օթեալին կ'անդամակցի :

Աղաթոն էֆ. ամիսէ մը կը յաջողի պահանջեալ տոմարներն պատրաստել : Անգղիոյ կառավարութեան կողմանէ զանազային վիճակն չննելու եկող պաշտօնեաներն՝ սքանչալմամբ կը տեղեկագրեն իրենց պետութեան, Թուրքիոյ տոմարակալական օրինաւորութեան և տոմարապետի (Աղաթոն էֆէ) հմտութեան մասին : Անգղիոյ թագուհին մի ոսկի ժամացոյց նուր կը դրիկ Գրիգոր Աղաթոնի (1862 յիսն. 22), և Օսմանեան կառավարութիւնն Ուլաի սանիի աստիճանն կը շնորհէ նմա :

Գր. Աղաթոն 1862ին Տար իւլ ֆիհուս թղթագրամաց բարձման հաշուակալութեան սենեկին տնօրէն կ'անուանի : 1863 յունիս 5ին Միսթիմիոյ երրորդ աստիճանի շքանշանն կը տրուի իրեն :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՂԱՄ ՄԸ

Շարայարեղի



Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք

(Շար. տիս էջ 398. 1898)

Ժ

Պ Ր Ո Յ. Հիւբշման իր հայերէն քերականութեան մէջ (Ա. էջ 438) մեր դպար բառը կը համեմատէ յն. *Թալերոճ*՝ թարմ, ուժեղ, *Թալոս*՝ ծիւղ, տերեւ, *Թալոս*՝ ըն, ձիւղ, *Թի* բառերուն հետ. հայ ձեւը կը գնէ իբր դաշար՝ որու հետ կը համեմատէ արդար. առանց սակայն գնելու հնդեւրոպական արմատը՝ որով այս բառերը բղխած են : Այս ալ անշուշտ նոյն հնդիւսական խոհեմութեան և շրջակայեցութեան պատճառաւ է միայն. որովհետեւ հայերէն դաշ- և յուն. *Թալ*- կառոյ են զայ հաւասարապէս նիս. **dhāl*-, ինչպէս և **dhj*-. ձեւէ մը : Թալորդը պիտի ցուցնէ թէ ասոնցմէ ընտրելի է **dhj*-. որու հետ պէտք է կապել նաեւ մի քանի ուրիշ հայ բառեր :